

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	3
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ	9
5. ՀԱՐԿԱՔՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	10
5.1. Բյուջեի եկամուտները	10
5.2. Բյուջեի ծախսերը	11
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	12
5.4. Պետական պարտք	12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	14
6.1. Գնաճ	14
6.2. Ավանդներ	15
6.3. Վարկեր	16
7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	19
8. ԱՄՓՈՓՈՒՄ	20

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Վերջին ամիսներին ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշն ունի շարունակական դանդաղման միտում, ինչը բավական մտահոգիչ է: 2021թ. հոկտեմբերին տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) եղել է բավական ցածր՝ 3.6%, այն դեպքում, երբ նախորդ տարի նույն ամսին գրանցվել էր 9.2% անկում, ինչը, որպես ցածր բազա, պետք է նպաստեր ընթացիկ տարվա հոկտեմբերին ՏԱՑ-ի ավելի շատ արագացմանը (միայն բազայի էֆեկտը կազմում է շուրջ 1.5 տոկոսային կետ): Թեև հոկտեմբերի ՏԱՑ-ը փոքր ինչ բարձր է սեպտեմբերի ցուցանիշից, այնուամենայնիվ դա բավական չի եղել կուտակային՝ հունվար-հոկտեմբեր ամիսների ՏԱՑ-ի արագացման համար: Վերջինս կազմել է 4.3%՝ հունվար-սեպտեմբեր ամիսներին գրանցված 4.4% ՏԱՑ-ի համեմատ դանդաղելով 0.1 տոկոսային կետով: Նախորդ տարվա հունվար-հոկտեմբեր ամիսներին գրանցվել էր 7.1% անկում, ինչը նշանակում է, որ այս տարվա 4.3% աճով տնտեսական ակտիվությունը 2019թ. համեմատ նվազել է 3.1%-ով: Ընդ որում, 2019թ. համեմատ աճի ցուցանիշը նույնպես վատթարացել է նախորդ ամսվա համեմատ՝ շուրջ 0.4 տոկոսային կետով: Նման պայմաններում 2021թ. տարեկան տնտեսական աճը հավանաբար կլինի 4.0-4.5%-ի սահմաններում, ինչը չափազանց ցածր է՝ հաշվի առնելով այն, որ բազային տարին եղել է ճգնաժամային, և գրանցվել է 7.4% անկում: Դա նշանակում է, որ ՀՀ տնտեսությունը չի վերականգնվել 2020թ. շոկերից հետո:


Փժապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %



2021թ. հունվար-հոկտեմբեր ամիսների ՏԱՑ-ի 4.3% աճն առավելապես պայմանավորված է առևտրի և ծառայությունների ոլորտներում տնտեսական ակտիվության աճով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 2.5 և 1.4 տոկոսային կետ: Շինարարության և արդյունաբերության ոլորտները


նույնպես ունեցել են դրական նպաստում SԱՑ-ին՝ յուրաքանչյուրը 0.3-ական տոկոսային կետով:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2021թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %




Արդյունաբերության ոլորտում նախորդ ամիսներին գրանցված անկումներից հետ հոկտեմբերին արձանագրվել է աճ: Հոկտեմբերին արդյունաբերության աճը կազմել է 3.9%, ինչի արդյունքում շուրջ 0.4 տոկոսային կետով արագացել է նաև կուտակային աճը՝ հունվար-հոկտեմբերին կազմելով 1.1%:

2021թ. հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով¹ արդյունաբերության 0.7% աճը պայմանավորված է եղել «Էլեկտրաէներգիա, գազի և գոլորշու մատակարարում» և «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ճյուղերի աճով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 1.0 և 0.1 տոկոսային կետ: Մշակող արդյունաբերության ոլորտում շարունակվել է անկումը՝ հունվար-սեպտեմբերին կազմելով 0.6%, ինչն ընդհանուր արդյունաբերության աճին ունեցել է 0.4 տոկոսային կետով բացասական նպաստում: Հանքարդյունաբերության ոլորտում գրանցվել է 0.1% աճ, որն ընդհանուր արդյունաբերության աճին նշանակալի նպաստում չի ունեցել:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %




Շինարարության ոլորտում հոկտեմբերին գրանցվել է աճի արագացում, սակայն կուտակային աճի տեմպը շարունակել է դանդաղել: Շինարարության ծավալների 12-ամսյա աճը հոկտեմբերին արագացել է սեպտեմբերի համեմատ 1.0 տոկոսային կետով և կազմել է 3.6%: Մինչդեռ հունվար-հոկտեմբեր ամիսների կուտակային աճի տեմպը դանդաղել է 0.5 տոկոսային կետով՝ կազմելով 5.9%: Այս զարգացումների պայմաններում շինարարության իրական ծավալներն ավելի ցածր են 2019թ. մակարդակից՝ շուրջ 8.2%-ով:

¹ Արդյունաբերության կառուցվածքը 2021թ. հունվար-հոկտեմբեր ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %



Ծառայությունների ճյուղում աճի տեմպը մի քանի ամիս շարունակաբար դանդաղելուց հետո հոկտեմբերին արագացել է՝ պայմանավորված բազայի էֆեկտով: 2021թ. հոկտեմբերին ծառայությունների աճը կազմել է 14.6%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով շուրջ 5.0 տոկոսային կետով: Սակայն, պետք է նշել, որ այս արագացմանը «օգնել է» նախորդ տարվա նույն ամսում տեղի ունեցած անկման 5.0 տոկոսային կետով խորացումը: Հետևաբար, կարող ենք փաստել, որ նախորդ ամսվա համեմատ ծառայությունների ոլորտում դրական միտումներ չեն եղել, քանի որ աճի արագացումն ամբողջությամբ բացատրվում է բազայի էֆեկտով: Հունվար-հոկտեմբեր ամիսներին ծառայությունների աճը կազմել է 6.4%՝ նախորդ ամսվա կուտակային աճի համեմատ արագանալով 1.0 տոկոսային կետով: Սակայն, այս դեպքում նույնպես, աճի արագացումը պայմանավորված է բազայի էֆեկտով, քանի որ անցած տարի տեղի էր ունեցել շուրջ 1.3 տոկոսային կետով անկման խորացում:

2019թ. նույն ժամանակահատվածի համեմատ, 2021թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին ծառայությունների ոլորտը գրանցել է անկում՝ շուրջ 7.6%-ով:


Հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով² ծառայությունների աճը կազմել է 5.4%, որին առավելապես նպաստել է «կացություն և հանրային սննդի կազմակերպում» ենթաճյուղի շուրջ 70.3% աճը (նպաստումը կազմել է 4.1 տոկոսային կետ): Ծառայությունների ոլորտի աճին շուրջ 8.0 տոկոսային կետով հակազդել է «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ենթաճյուղի շուրջ 36.9% անկումը: Ծառայությունների մնացած ենթաճյուղերն ունեցել են դրական

² Ծառայությունների կառուցվածքը 2021թ. հունվար-հոկտեմբեր ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

նպաստում, որոնցից առավել նշանակալի են եղել առողջապահության, տրանսպորտի, ինչպես նաև տեղեկատվություն և կապ ենթաճյուղերի նպաստումները, որոնք կազմել են համապատասխանաբար 2.14, 2.08 և 1.9 տոկոսային կետ:

1.4. Առևտուր


Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի ոլորտում հոկտեմբերին գրանցվել է կտրուկ աճ՝ նույնպես պայմանավորված բազայի էֆեկտով: Ընթացիկ տարվա հոկտեմբերին առևտրի ծավալների աճը նախորդ տարվա հոկտեմբերի համեմատ կազմել է 12.7՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 11.3 տոկոսային կետով: Սակայն, նախորդ տարի հոկտեմբերին առևտրի անկումը շուրջ 10.1 տոկոսային կետով խորացել էր, հետևաբար ընթացիկ տարվա աճը մեծամասամբ բացատրվում է բազայի էֆեկտով: Հունվար-հոկտեմբեր ամիսների աճը նույնպես արագացել է՝ կազմելով 7.0%, սակայն 2019թ. նույն ժամանակահատվածի համեմատ առևտրի ծավալները նվազել են 6.4%-ով:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ, %



Ապրանքների արտահանման ծավալների աճի տեմպը վերականգնվել է հոկտեմբերին: 2021թ. սեպտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ ապրանքների արտահանման ծավալը կրճատվել է 11.4%-ով: Անկումը, սակայն, երկար չի տևել և հոկտեմբերին գրանցվել է աճ՝ շուրջ 14.7%: Հունվար-հոկտեմբեր ամիսներին արտահանման ծավալների աճը դանդաղել է նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի համեմատ՝ կազմելով 16.9%:


Հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով³ արտահանման 17.2% աճից 7.3 տոկոսային կետը պայմանավորված է եղել հանքահումքային արտադրանքի արտահանման շուրջ 21.7% աճով (ինչն էլ իր հերթին պայմանավորված է մետաղների միջազգային գների աճով): Արտահանմանը դրական նպաստում են ունեցել նաև «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «բուսական ծագման արտադրանք» և «պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերի աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 4.6, 2.3 և 1.8 տոկոսային կետ:

Արտահանման աճին շարունակել են հակազդել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (անկումը՝ 17.2%) և «սարքեր և ապարատներ» (անկումը՝ 43.0%) ապրանքախմբերի արտահանման ծավալների անկումը, որոնք ընդհանուր արտահանման աճին հակազդել են համապատասխանաբար 2.6 և 0.9 տոկոսային կետով:

³ Արտահանման կառուցվածքը 2021թ. հունվար-հոկտեմբեր ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

Արտահանման նախորդ ամիսների ցուցանիշները ՀՀ ՎԿ կողմից վերանայվել են, ինչի արդյունքում 0.1 տոկոսային կետով բարելավվել է սեպտեմբեր ամսվա արտահանման ցուցանիշը:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ, %



Հոկտեմբերին ներմուծման ծավալների աճի տեմպը զգալիորեն արագացել է: 2021թ. հոկտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ ներմուծման ծավալներն աճել են 29.4%-ով՝ սեպտեմբերի համեմատ արագանալով 8.1 տոկոսային կետով: Հունվար-հոկտեմբեր ամիսների ներմուծման աճը նույնպես արագացել է՝ կազմելով 11.8%, սակայն ներմուծման ծավալները դեռևս ցածր են մնացել 2019թ. նույն ամիսների ցուցանիշից՝ շուրջ 4.1%-ով:

2021թ. հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով⁴ ներմուծման ծավալների աճին զգալի նպաստում են ունեցել «հանքահումքային արտադրանք», «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «մանածագործական իրեր» ապրանքախմբերի ներմուծման ծավալների աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 3.3, 2.2 և 1.2 տոկոսային կետ:


ՀՀ ՎԿ կողմից վերանայվել են նախորդ ամիսների ներմուծման ցուցանիշները, ինչի արդյունքում բարելավվել է սեպտեմբեր ամսվա աճի ցուցանիշը շուրջ 1.2 տոկոսային կետով, իսկ հունվար-սեպտեմբեր ամիսների կուտակային աճի ցուցանիշը՝ 0.1 տոկոսային կետով:

⁴ Ներմուծման կառուցվածքը 2021թ. հունվար-հոկտեմբեր ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2021թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին միջին անվանական աշխատավարձերի աճը ցածր է եղել գնաճի տեմպից⁵: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում հունվար-սեպտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 6.3%-ով՝ կազմելով 198,757.0 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է 3.6%-ով և կազմել 172,382.0 դրամ, իսկ մասնավոր հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 7.3%-ով՝ կազմելով 211,178.0 դրամ:

Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2020-2021թթ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, %




Նույն ժամանակահատվածում ընդհանուր տնտեսությունում անվանական աշխատավարձի աճի տեմպը ավելի ցածր է եղել, քան գնաճի տեմպը (միջին գնաճը կազմել է 6.7%), ինչի պատճառով իրական աշխատավարձերը (գնաճով ճշգրտված աշխատավարձերը) նվազել են շուրջ 0.4%-ով:

⁵ ՀՀ ՎԿ կողմից դադարեցվել է հաշվետու ամսվա աշխատավարձերի ցուցանիշի հրապարակումը օպերատիվ տվյալների հրապարակման հետ միասին: Փոխարենը, աշխատավարձի տվյալները հրապարակվում են ավելի ուշ՝ հաշվետու ամսվա հաջորդող ամսվա վերջին աշխատանքային օրը:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

**Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը, %
(աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում)**



2021 թվականի հունիս-հոկտեմբեր ամիսներին ՀՀ դրամի արժեզրկման տեմպը զգալիորեն դանդաղել է: Հունվար-հոկտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ՀՀ դրամն արժեզրկվել է ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ, սակայն վերջին ամիսներին արժեզրկման տեմպը զգալիորեն դանդաղել է: Արժեզրկման չափը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ կազմել է համապատասխանաբար 4.6% և 9.7%: Ռ-Դ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամը շարունակում է մնալ արժեզրկված, որի չափը կազմել է շուրջ 1.2%:


Հոկտեմբերի վերջի դրությամբ, նախորդ տարվա նույն օրվա համեմատ՝ ՀՀ դրամն արդեն արժևորվել է ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ համապատասխանաբար 3.3 և 3.5 տոկոսով, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ արժեզրկման տեմպը խորացել է՝ կազմելով 7.8%;

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ⁶

5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի հարկային եկամուտների աճի տեմպը փոքր-ինչ արագացել է: Պետական բյուջեի հարկային եկամուտները 2021թ. հունվար-հոկտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 12.7%-ով:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճը հունվար-հոկտեմբեր ամիսներին հիմնականում պայմանավորված է եղել ԱԱՀ-ի (աճը՝ 16.2%), մաքսատուրքի (աճը՝ 30.0%) և պարտադիր սոցիալական վճարների (աճը՝ 77.9%) գծով հարկային մուտքերի աճով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 5.4 և 1.4-ական տոկոսային կետ: Հարկային եկամուտների աճին զգալիորեն՝ շուրջ 1.6 տոկոսային կետով, նպաստել է նաև պետական տուրքերի աճը, ինչը պայմանավորված է հանքարդյունաբերության ոլորտի արտադրանքի արտահանման համար սեպտեմբերից գործող պետական տուրքի առկայությամբ:


⁶ Պետական բյուջեի ցուցանիշների աճերի հաշվարկն իրականացվել է դրանց «հազար դրամներով» արտահայտված ցուցանիշների կիրառմամբ: Գծապատկերներում ներկայացված «մլրդ դրամ» արտահայտությամբ ցուցանիշների կիրառման դեպքում աճի ցուցանիշները կարող են փոքր-ինչ տարբեր լինել:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2020թ. հունվար-հոկտեմբեր		2021թ. հունվար-հոկտեմբեր	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	-5.2	-5.2	12.7	12.7
ԱԱՀ	-2.9	-0.9	16.2	5.4
Շահութահարկ	-16.5	-2.1	6.7	0.8
Եկամտային հարկ	1.3	0.4	2.1	0.6
Ակցիզային հարկ	0.5	0.0	-9.0	-0.8
Շրջանառության հարկ	-8.6	-0.2	20.8	0.5
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	-2.3	-0.1	17.3	0.6
Մաքսատուրք	-29.4	-1.9	30.0	1.4
Սոցիալական վճար	28.9	0.4	77.9	1.4
Այլ հարկային եկամուտներ	13.4	0.2	84.7	1.5
Պետական տուրք	-23.9	-0.7	67.7	1.6

5.2. Բյուջեի ծախսերը⁷

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Պետական բյուջեի ծախսերի աճի տեմպը փոքր-ինչ դանդաղել է: 2021թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջեից իրականացվել է 1349.1

⁷ Պետական բյուջեի ծախսերը ներկայացված են հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով, քանի որ հունվար-հոկտեմբեր ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

մլրդ դրամի ծախս, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածում կատարված ծախսերի նկատմամբ ավելի է 9.7%-ով: Ծախսերի աճը պայմանավորված է ինչպես ընթացիկ ծախսերի 8.4%, այնպես էլ կապիտալ ծախսերի մոտ 23.4% աճով: Ընդ որում, կապիտալ ծախսերի աճի տեմպը անընդհատ դանդաղում է, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2021թ. մարտին կատարվել են զգալի չափով կապիտալ ծախսեր՝ առաջացնելով բավական բարձր աճ, իսկ դրանից հետո կապիտալ ծախսերը բավական ցածր մակարդակով են իրականացվում:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը⁸

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը -), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ



Պետական բյուջեի պակասուրդը աճել է փոքր չափով: 2021թ. սեպտեմբերին պետական բյուջեի ծախսերը փոքր չափով են գերազանցել եկամուտներին, ինչի արդյունքում բյուջեի պակասուրդը մեծացել է ընդամենը 4.0 մլրդ դրամով և շուրջ 4.7%-ով ցածր է 2020թ. համապատասխան ամիսների ցուցանիշից:

5.4. Պետական պարտք


2021թ. հոկտեմբերի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 9,209.2 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա հոկտեմբերի նկատմամբ աճելով 15.5%-ով: Կառավարության պարտքը նույն ժամանակահատվածում նույնպես զգալիորեն աճել է՝ կազմելով 8,734.9 մլն ԱՄՆ դոլար և 2020թ. նույն ամսվա

⁸ Պետական բյուջեի հաշվեկշռի ցուցանիշները ներկայացված են հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով, քանի որ հունվար-հոկտեմբեր ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

համեմատ ավելացել 16.5%-ով: Պարտքի աճը պայմանավորված է և՛ ներքին, և՛ արտաքին պարտքի աճով:

Հոկտեմբերի դրությամբ պետական կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը նախորդ ամսվա համեմատ աճել է շուրջ 0.3 տոկոսային կետով՝ հասնելով 8.7%-ի (տարեսկզբից աճը կազմել է 2.6 տոկոսային կետ), իսկ միջնաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը սեպտեմբերի համեմատ աճել է 0.25 տոկոսային կետով և տարեսկզբի համեմատ՝ 2.0 տոկոսային կետով: Ինչպես նշել ենք նախորդ հրապարակումներում, այս դինամիկան մտահոգիչ է, քանի որ այսպիսի բարձր տոկոսադրույքներով պարտատոմսերի թողարկումը զգալիորեն մեծացնելու է կառավարության պարտքի սպասարկման ծախսերը և դժվարացնելու է պակասուրդի ֆինանսավորումը:


Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %




Գնաճի տեմպը շարունակում է արագանալ և գրանցել նոր բարձրակետեր:

12-ամսյա գնաճն ընթացիկ տարվա հոկտեմբերին կազմել է 9.1%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով շուրջ 0.2 տոկոսային կետով: Բարձր գնաճային միջավայրում, ՀՀ կենտրոնական բանկը հոկտեմբերին անփոփոխ է թողել վերաֆինանսավորման տոկոսադրույքը: Հաշվի առնելով նախորդ ամիսներին տոկոսադրույքի փոքր ազդեցությունը գնաճի զսպման գործում (տոկոսադրույքի շարունակական բարձրացման պայմաններում գնաճն արագացել է), ինչպես նաև գանձապետական պարտատոմսերի եկամտաբերության աճը, ԿԲ կողմից նման որոշումը տրամաբանական է: Սակայն, միևնույն ժամանակ, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել գնաճի արագացման զսպման և դրա դանդաղեցման ուղղությամբ, հավանաբար ոչ միայն ԿԲ գործառնությունների շարքում:

6.2. Ավանդներ


Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



2021 թ. հոկտեմբերին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը արագացել է՝ կապված բազայի էֆեկտի հետ: Հոկտեմբերի վերջի դրությամբ ավանդների ծավալները նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել են 11.4%-ով՝ արագանալով 3.5 տոկոսային կետով: Սակայն, նախորդ տարվա հոկտեմբերին՝ նույն տարվա սեպտեմբերի համեմատ ավանդների աճի տեմպը կտրուկ՝ շուրջ 4.2 տոկոսային կետով, վատթարացել էր, ինչն էլ եղել է ընթացիկ տարում աճի արագացման հիմնական գործոնը:

Ավանդների աճն ապահովվել է ռեզիդենտներից ներգրավված ավանդների շուրջ 18.0% աճով, այն դեպքում, երբ ոչ ռեզիդենտների ավանդները նվազել են 7.0%-ով:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Ավանդների աճը հիմնականում՝ շուրջ 6.8 տոկոսային կետով, պայմանավորված է ձեռնարկությունների կողմից ներդրված ավանդների աճով, իսկ ոչ ռեզիդենտների կողմից ներդրված ավանդների ծավալները նվազել են՝ ընդհանուր ավանդների աճին ունենալով 1.9 տոկոսային կետով բացասական նպաստում:

6.3. Վարկեր


Վարկերի ծավալների նվազման տեմպը 2021թ. հոկտեմբերին խորացել է: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը 2021 թվականի հոկտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազել է շուրջ 5.4%-ով:

Գծապատկեր 18. 2021թ. վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %



Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները նվազել են առաջանցիկ տեմպով: Ընդ որում, ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները նվազող են եղել 2021թ. գրեթե բոլոր ամիսներին: Հոկտեմբերին դրանց ծավալը նվազել է 12.1%-ով, իսկ նպաստումն ընդհանուր վարկերի աճին կազմել է -0.7 տոկոսային կետ: Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները նվազել են 5.0%-ով և վարկերի ընդհանուր ծավալին ունեցել են -4.7 տոկոսային կետ նպաստում:


Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը 2021 թվականին, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների նվազումը հիմնականում պայմանավորված է իրավաբանական անձանց վարկերի շուրջ

9.8%-ով նվազմամբ, որի նպաստումը ռեզիդենտների ընդհանուր վարկերին կազմել է - 5.6 տոկոսային կետ: Այդ երևույթը խոսում է այն մասին, որ իրավաբանական անձիք հետաձգում են իրենց ներդրումային ծրագրերը՝ մի կողմից վարկեր չվերցնելով և մյուս կողմից ազատ դրամական միջոցները բանկերում որպես ավանդ ներդնելով:

Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները վարկերի աճին, տոկոսային կետ



Վարկերի կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի⁹ ուսումնասիրելու պարագայում կարող ենք նկատել, որ վարկերի նվազումը պայմանավորված է գրեթե բոլոր ոլորտներում վարկավորման նվազմամբ: Բացառություն են կազմում հիփոթեքային և շինարարության ոլորտին տրամադրվող վարկերի աճերը, որոնք ընդհանուր վարկերի աճին ունեցել են համապատասխանաբար 3.8 և 1.8 տոկոսային կետով դրական նպաստում: Դա բացատրվում է հիպոթեքային վարկերի տոկոսավճարների համար եկամտային հարկի վերադարձի հնարավորությամբ և ապագայում դրա վերացման հեռանկարով:


⁹ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում: Այդ պատճառով, ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները մի դեպքում նվազում են 5.8%-ով, իսկ մյուս դեպքում՝ 5.0%-ով:

7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Համաճարակային իրավիճակը ՀՀ-ում կտրուկ վատթարացել է սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, սակայն նոյեմբերին հիվանդության տարածումը սկսել է դանդաղել: 2021թ. հոկտեմբերին համավարակի նոր գրանցված դեպքերի միջին օրական ցուցանիշը զգալիորեն աճել է՝ հասնելով 1504-ի: Մահվան միջին օրական դեպքերը նույնպես աճել են՝ կազմելով 33 դեպք: Վերջինս աննախադեպ ցուցանիշ է COVID-19 համավարակի տարածման ողջ ընթացքում: Նոյեմբերին հիվանդության նոր գրանցված դեպքերի միջին օրական քանակը նվազել է՝ հասնելով 1142-ի, սակայն մահացության դեպքերը շարունակել են աճել՝ գրանցելով նոր հակառեկորդ՝ օրական միջին հաշվով 44 դեպք:

Աշխարհի մյուս երկրների հետ համեմատության մեջ ՀՀ-ում տիրող իրավիճակը նույնպես զգալիորեն վատթարացել է: Մեկ միլիոն բնակչության հաշվով գրանցված դեպքերի թվով նոյեմբերի 25-ի դրությամբ Հայաստանը զբաղեցնում է աշխարհում 37-րդ տեղը՝ նախորդ ամիս զբաղեցրած 41-րդ տեղի փոխարեն, իսկ մահվան դեպքերի թվով Հայաստանը տեղափոխվել է 16-րդ հորիզոնականը՝ նախորդ ամսվա 26-րդ հորիզոնականից:

Գծապատկեր 21. Կորոնավիրուսի վարակման և մահացության միջին օրական դեպքերը Հայաստանում



* 2021թ. նոյեմբերի 24-ի դրությամբ

8. ԱՄՓՈՓՈՒՄ

1. Հոկտեմբերի տնտեսական ակտիվության ցուցանիշը շարունակել է դանդաղել: Տնտեսությունում նկատվել է 12-ամսյա աճի որոշակի արագացում, որը, սակայն, բավարար չի եղել կուտակային աճի դանդաղումը զսպելու համար: Հունվար-հոկտեմբեր ամիսների ՏԱՑ-ը դանդաղել է 0.1 տոկոսային կետով՝ կազմելով 4.3%: Այս միտումների պայմաններում, տարեկան տնտեսական աճը կարող է լինել 4.0-4.5%-ի սահմաններում, ինչը չափազանց ցածր է՝ հաշվի առնելով այն, որ բազային (համեմատվող) տարին եղել է ճգնաժամային և գրանցվել է 7.4% անկում: Բնականաբար երկնիշ տնտեսական աճի մասին այլևս խոսք լինել չի կարող, այնուամենայնիվ կառավարությունը պետք է իրականացնի տնտեսական քաղաքականության որոշակի միջոցառումներ տնտեսական աճի դանդաղող տեմպը վերափոխելու ուղղությամբ:

2. Պետական բյուջեի հիմքում դրված տնտեսական աճի կանխատեսումները, ներկա պայմաններում, դառնում են անիրատեսական՝ վտանգելով հարկաբյուջետային քաղաքականության նպատակների իրականացումը և կայունությունը: 2022թ. պետական բյուջեի նախագծով 2021թ. սպասվում է շուրջ 6.5% տնտեսական աճ, իսկ հաջորդ տարի՝ 7.0%: Բնականաբար, 2021թ. վերջին երկու ամիսներին հնարավոր չէ աճի այդ չափով արագացում, իսկ տնտեսական քաղաքականության միջոցառումների իրականացման թերացման պարագայում 2022թ. հնարավոր չի լինի ապահովել 7.0% աճը: Այդ պայմաններում կվտանգվի պետական բյուջեով սահմանված ծախսերի իրականացումը (քանի որ համապատասխան եկամուտներ չեն հավաքագրվի)՝ խախտելով հարկաբյուջետային քաղաքականության հիմնական նպատակների իրագործումը, կամ կառավարությունը ստիպված կլինի պարտքի հաշվին ֆինանսավորել ծախսերը՝ վտանգելով հարկաբյուջետային կայունությունը:

3. Արդյունաբերության ոլորտի աճը շարունակում է ցածր մնալ մշակող արդյունաբերության անկման պայմաններում: Կառավարության իրականացրած գործողությունների հետևանքով (մասնավորապես՝ արտահանման տուրքի ներդրում, ստուգումներ հանքարդյունահանող կազմակերպություններում և այլն) հանքարդյունաբերության ոլորտում տեղի է ունեցել տնտեսական ակտիվության դանդաղում, ինչի հաշվին դանդաղել է ընդհանուր արդյունաբերության աճը: Միևնույն ժամանակ, մշակող արդյունաբերությունը վերջին ամիսներին ունի բացասական դինամիկա՝ հունվար-սեպտեմբերին գրանցելով շուրջ 0.6% անկում: Արդյունաբերության նման դինամիկան պետք է մտահոգիչ լինի կառավարության համար, քանի որ վերջինս որպես տնտեսության շարժիչ ուժ՝ ցանկանում է տեսնել մշակող արդյունաբերությունը, մասնավորապես՝ բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված արդյունաբերությունը: Մինչդեռ, արդեն

բավական երկար ժամանակահատված է (սկսած 2018 թվականից), որ կառավարության թիրախավորմանը համապատասխան՝ վերափոխումներ տեղի չեն ունենում տնտեսությունում:

4. ՀՀ-ում համաճարակային իրավիճակը հոկտեմբեր ամսին կտրուկ վատթարացել է: Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ՀՀ-ում գրանցվել է հիվանդության ռեկորդային քանակությամբ նոր դեպքեր, ինչպես նաև աննախադեպ քանակով մահացության դեպքեր: Առավել մտահոգիչ է այն հանգամանքը, որ մեկ միլիոն բնակիչների հաշվով մահացության դեպքերի թվով ՀՀ-ն աշխարհի շուրջ 200 երկրների շարքում զբաղեցնում է 16-րդ տեղը: Ընդ որում, վերջինս վատթարացել է նախորդ ամսվա համեմատ, երբ ՀՀ-ն այդ ցուցանիշով զբաղեցնում էր 26-րդ տեղը: Այս իրավիճակը ցույց է տալիս կառավարության ձախողումը նաև առողջապահության ոլորտում: Բնականաբար, աշխարհի մյուս երկրների համեմատ համաճարակային վատ իրավիճակը բարդացնում է ՀՀ տնտեսական զարգացման հեռանկարները, հետաձգում է տնտեսության վերականգնումը, ինչպես նաև մեծացնում է անորոշությունները՝ ինչպես ներքին տնտեսական գործակալների, այնպես էլ օտարերկրյա ներդրողների շրջանում:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: